ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՅԻՅԱՆ
Արցախի պետական համալսարանի
գրականության և լրագրության ամբիոնի ասպիրանտ
ՀՏԴ 821.19.0

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԻՆՉԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. պոեզիա, նախաերկրաշարժյան շրջանի պոեզիա, ասելիքի սահման, հեգնանք, ասելիքի արժեքայնություն, ստեղծագործական մտածողության կառուցակարգ, թեմատիկ ընդգրկում:

Ключевые слова и выражения: поэзия, поэзия до землетрясения, границы слова, ирония, ценность слова, механизм творческого мышления, тематический охват.

Key words and expressions: poetry, pre-earthquake period poetry, the boundaries of a word, irony, the value of a word, the mechanism of creative thinking, thematic coverage.

Անշուշտ, յուրաքանչյուր ժամանակաշրջան պարտադրում է յուրովի մոտեցում իրականությանը: Դա այդպես է նաև գրական հարթության մեջ: Եթե փորձելու լինենք ժամանակագրական սահմանաբաժանման ենթարկել Գրիգորյանի պոեզիան, ապա այն կարելի է բաժանել մինչանկախության և հետանկախության շրջանների, չնայած հանդիպում ենք նաև նախաերկրաշարժյան և հետերկրաշարժյան փուլերի սահմանմանը:

Արքմենիկ Նիկողոսյանը գրում է. «Ծննդավայր Գյումրու, մանկության հիշատակների պատկերումները հետերկրաշարժյան փուլում թելադրում են ընկալումի նոր որակ. նախաերկրաշարժյան այն բանաստեղծությունները, որոնք ուրախ-երգիծական-պարոդիկ կերպընկալում ունեին, երկրաշարժից հետո արդեն ընդարձակում են իրենց ասելիքային տարածքի պարագրկումը՝ ներառելով ողբերգականի էութենությունը»:[1]

Սուրեն Աբրահամյանը նշում է Հովհաննես Գրիգորյանի ստեղծագործական կենսագրության 1960-ականների շրջանի, ապա 1970-ականներում արդեն սկզբնավորված հովհաննեսգրիգորյանական ուղղության մասին, որը նշանավորվեց «Թե ինչպես անհետացավ

[1] **Ա. Նիկողոսյան**, Հովհաննես Գրիգորյանի պոեզիան (Նոթագրումներ մենագրության համար), «Գրական թերթ», 2015, թիվ 16, 10 օգոստոսի, էջ 4:

բանաստեղծությունը» ստեղծագործությամբ: Ալ. Թոփչյանի կարծիքով Հ. Գրիգորյանի ստեղծագործական կենսագրության սկիզբ կարելի է դիտել 1961 թվականը. «Ահա 1961-1963 թվականներին գրված երեք բանաստեղծություն՝ «Ամենաառաջինը», «Լինում է կյանում մի բարդ ժամանակ», «Ստվերները»: Գործեր, որ վկայում են բանաստեղծի առաջին քայլերի մասին: Ճիշտ է, սրանց զուգահեռ, Հովհաննես Գրիգորյանը «Պիոներ Կանչում» լույս է ընծայել մանկական մի շարք սրամիտ և հասուն բանաստեղծություններ, որոնք նույնպես կարող են ստեղծագործական կենսագրության սկիզբ վկայել….»:[2]

Հովհաննես Գրիգորյանի ստեղծագործությունների մասին սակավ ուսումնասիրությունները փաստում են, որ այդ կապակցությամբ գրական վերլուծական ու գրաքննադատական անդրադարձերը գնահատելի են, բայց սակավ: Դրանք են Ալեքսանդր Թոփչյանի[3], Գրիգոր Պըլտեանի[4], Նորայր Ղազարյանի[5], Գրիգոր Հակոբյանի[6], Սուրեն Աբրահամյանի[7], Արքմենիկ Նիկողոսյանի[8] անդրադարձները: Սակայն չկա համակողմանի վերլուծության ենթարկված ոչ մի ամբողջական ուսումնասիրություն:

Հովի. Գրիգորյանի մինչանկախության շրջանի ստեղծագործություններն ամփոփվել են «Երգեր առանց երաժշտության» (1975), «Բոլորովին ուրիշ աշուն» (1979), «Անձրև մի տխուր առիթով» (1982), «Դանդաղ ժամեր» (1986) ժողովածուներում:

Հովհաննես Գրիգորյանի ինչպես մինչանկախության, այնպես էլ հետանկախության շրջանի ստեղծագործությունների թեմատիկ ընդգրկումները լայն են: Ասելիքի լայն համայնապատկերի առանցքում մարդն է՝ իր ապրումներով, մտքերի ու ասելիքի խորությամբ, ներհայեցողության ու ինքնավերլուծության միտումներով:

---

[2] **Ա. Թոփչյան**, Բառի սահմանները, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1978, էջ 61:

[3] Տե՛ս **Անդ**, էջ 71:

[4] Տե՛ս **Պըլտեան Գրիգոր** «Գրիգորեան ժամանակի դիմաց» Կայք գրականութեան տարեգիրք, ֆրանսահայ գրողներու ընկերակցութեան, Փարիզ, 1989, էջ 60-61:

[5] Տե՛ս **Ն. Ղազարյան**, Բանաստեղծության դրաման, «Գրական թերթ», 2013, թիվ 14, 15 դեկտեմբերի, էջ 2:

[6] Տե՛ս **Գ. Հակոբյան**, Հպանցիկ նկատառումներ Հովհաննես Գրիգորյանի «Կես ժամանակ» ժողովածուի մասին, Գրական թերթ, , թիվ 3, 14 դեկտեմբերի,2006,էջ 2:

[7] Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Հովհաննես Գրիգորյան. Ընդամենը մի տող և ընդամենը… մի կյանք, Գրականագիտական հանդես, ԺԶ, Ե., 2015, էջ 7:

[8] Տե՛ս **Ա. Նիկողոսյան**, Հովհաննես Գրիգորյանի պոեզիան (Նոթագրումներ մենագրության համար), Գրական թերթ,10 օգոստոսի, 2015:

Ցայսօր տրված չէ Հովհաննես Գրիգորյանի ստեղծագործությունների թեմատիկ ընդգրկման ամբողջական ու սպառիչ նկարագիրը:

Թե՛ Սուրեն Աբրահամյանը, թե՛ Արքմենիկ Նիկողոսյանը նշում են հայրենիերգության, սիրերգության, հայրերգության և մի շարք այլ թեմաների մասին, սակայն ուշադրության չեն արժանցել ժամանակի ընկալման ու իմաստավորման, գրական հարցի, մարդկային էության խորհրդի, սոցիալական հարցերի շեշտադրումների թեմատիկան (վերջինս բնորոշ է հետանկախության շրջանի ստեղծագործություններին): Գրիգորյանական պոեզիայի թեմատիկ ընդգրկումների առավել ամբողջական պատկերի բացահայտման փորձով է թերևս պայմանավորված սույն հոդվածի արդիականությունը:

Այսպես, ժամանակի հավերժության ընկալումը յուրատիպ հայտնությունների է մղում բանաստեղծին, և ահա այստեղ է ծնվում ինչպես ասելիքի ձևը, այնպես էլ՝ թեման: «20-րդ դարի 60-ական թվականների հայ բանաստեղծական ինքնատիպ համակարգերից մեկը Հովհաննես Գրիգորյանինն էր,- գրում է Նորայր Ղազարյանը: Բանաստեղծը «պարականոն» պոետիկական բևեռացման սկզբնավորողներից է: Եթե նրա սերնդակիցներից ոմանք անդավաճան են մնում բանաստեղծական փիլիսոփայական կշռույթների աճին, ապա Գրիգորյանը՝ կյանքի հոսքի ուժգնացման սկզբունքին: Ահա, նաև այս սկզբունքով են պայմանավորված վերջինիս պոեզիայի լարված բնույթը, նրա շարժուն ձևը: Բանաստեղծը հենվում է սուր «կենսափաստերի» անցման վրա: Հումորիկ դիտանկյունով նա միաժամանակ ներկայացնում է «կենսափաստերին» տրվող զգացական գնահատականը»[9]: Սա թերևս կարելի է պատճառաբանել ոճի ազատության, վերլիբրի կառուցակարգի սկզբունքով: Մեր, հայրենիերգություն, կենսական, արժեհամակարգային նշանակության հարցադրումներ, գրական արժեքների վերագնահատում ու վերահաստատում, բանաստեղծի կամ պոեզիայի անելիք և ասելիք. ահա Հովհ. Գրիգորյանի պոեզիայի ընդգրկուն տարածքը:

Պոեզիայի և արձակի սեռաժանրային երևույթների փոխներթափանցումներից արձակը քնարականացվեց, իսկ պոեզիան էպիկականացվեց: Այս փոխներթափանցումները Գրիգորյանի բոլոր թեմաներում էլ ուշագրավ երանգ ստացան:

«Աշուն» բանաստեղծությունը, որը, հիրավի, յուրատիպ է ստեղծագործական ըմբռնումների, պրոյեկտումների և զուգորդական

---

[9] **Ն. Ղազարյան**, Բանաստեղծության դրաման, «Գրական թերթ»,թիվ 14, 15 դեկտեմբերի, 2013 թ.:

կապերի ստեղծման առումով կարելի է որակել որպես ուշագրավ մուտք պոեզիայի աշխարհ: Ժամանակին տարակարծության և բուռն քննարկման նյութ դարձած բանաստեղծությունն իրականում ուրվագծում է հեղինակի խորը մտահուզային ապրումների տարածքը, որն ակնառու է աշնան եղանակի տեսքով ներկայացնելը.

Փողոցներում
Ծառերից կախված
Օրորվում են բանաստեղծները
Դեղին ժպիտ կա դեմքներին նրանց
Ձեռքներին հանգած ծխախոտ
Քամին գալիս է օրորում դանդաղ
և վայր են թափվում նրանց դեմքերից
դեղին դիմակներ
հոհոացողի բաց բերան
վրան…[10]

Բազմաշերտ ու ենթատեքստային տողերում առկա է ինչպես իրականության, այնպես էլ նրա վերափոխման մտայնացումը, որովհետև բանաստեղծի երևակայության գեղագիտական գործառույթին զուգահեռ արտացոլված է, այսպես կոչված կարգավորող, վերահսկող ու շտկող գործառույթը: Ինչպես տեսնում ենք «…հետո բացվում է դեմքը…» բանաստեղծության մեջ կարելի է նաև նկատել սյուրռեալիզմի որոշակի տարրեր, որով ավելի բազմախոս ու ընդգրկուն է դառնում հեղինակի ասելիքը: «Դեղին խշշոցով թափվող դիմակներ» ընդհանրացված պատկերացման մեջ ակնառու է բանաստեղծի ապրումների զգայական հիմքը: Ա. Թոփչյանը, ում կարծիքով «Աշուն» բանաստեղծությունը հասցվել է էպատաժի, ևս այն համոզմանն է, որ բանաստեղծը բանաստեղծության անելիքի հարցադրում է արել. «Հ. Գրիգորյանը իր սերնդակիցների մեջ թերևս ամենից շուտը զգաց բանաստեղծության անելիքն ու հետագա ճանապարհը»[11]: Վերջինս կարելի է համարել նաև բանաստեղծի պոեզիայի թեմաներից մեկը: Կարելի է նաև այսպիսի ձևակերպում տալ. գրականության խնդիրը, որն արտածվում է ժամանակի իրականությունից՝ չնայած Գրիգորյանի մոտ անցյալի աղեսները քիչ չեն:

---

[10] **Հովհ. Գրիգորյան**, Նոր տողից, Բանաստեղծություններ, Երևան, Անտարես, 2013, էջ 17:

[11] **Ա. Թոփչյան**, Բառի սահմանները, էջ 73:

«Փողոցներում ծառերից կախված օրորվում են բանաստեղծները». այս տողերում հեղինակի ասելիքի դրդապատճառային համակարգն ունի մեկ թեմա՝ ճշմարտության արժեքայնության հարցադրումը:

«Բոլորովին ուրիշ աշուն» ժողովածուում գերակշռող է սիրո թեման: Հայրեներգությանն առնչվող ստեղծագործությունները քիչ են, բայց տարողունակ: Ասելիքի մեջ կենսունակ են հայրեներգությանն առնչվող այս շրջանի ստեղծագործությունները: «Հայրենի հող» բանաստեղծության առանցքում ազգակիր անհատն է՝ ազգային հիշողության, մտածողության, արժանապատվության, ինքնագիտակցության ու ազգային խորը նույնականացման հոգեբանական խորքով:

Ես այս երգը երգում եմ կանգնած,
Որովհետև դու նա ես,
Ում խաղաղության համար մեռնում են առանց կասկածելու,
Որովհետև դու նա ես,
Ում համար կռվի են ելնում առանց հրամանի,
Որին ասում են՝ միակ,
Կարոտում են հեռվից…[12]

Ազգային արժանապատվությամբ են ասված «Ես այս երգը երգում եմ սկզբից, որովհետև դու նա ես, որին կորցնելուց հետո էլ ոչինչ չենք ունենա կորցնելու» տողերը, իսկ ազգային ինքնավեհացման և ընթերցողին ևս նույն հոգեվիճակները հաղորդող են նույն բանաստեղծության «Ես այս երգը երգում եմ գլխաբաց, որովհետև դու նա ես, ում ձեռքը պիտի իջնի մեր գլխին օրհնության նման, երբ մենք ճանապարհ ենք ընկնում, երբ մենք սկսում ենք օրը, երբ մենք ծնունդ ենք տալիս տողին ու մտքին»[13] տողերը: Բավականին հետաքրքիր խորք ունի «Հայաստան» բանաստեղծությունը, որտեղ Հայաստան երկիրը նույնացվում է «ծերացած մոր», «նորածին զավակի» հետ: Ինչպես առաջինը, այնպես էլ երկրորդը անվերապահ նվիրումի և հոգածության խնդիր ունեն:

Սա իմ երկիրն է- չափսերով այնպիսին,
Որ ազատորեն տեղավորել եմ սրտիս մեջ,
Որ չկորցնեմ հանկարծ…[14]

Իսկ «Իմ» բառի մեջ կարելի է պեղել բանաստեղծի սիրո և նվիրումի չափն առ հայրենիք: Հայրեներգության բոլոր բանաստեղծություններում էլ

---

[12] **Հովհ. Գրիգորյան**, Նոր տողից, Բանաստեղծություններ, էջ 7:
[13] **Անդ:**
[14] **Անդ,** էջ 25:

կա ոգեղենություն, բյուրեղյա մաքրություն ու սխրանք՝ զերծ ավելորդ ռոմանտիկությունից:

«Ծննդյան օր» բանաստեղծության մեջ ընթերցում ենք.

Ահա այսպիսի մի կյանք և
ցավերի մի չնչին տարեգրություն՝
գրանցված երկրորդ կարգի դեղնած ու անպետք թղթի վրա…[15]

Առաջին հայացքից գաղտնի թվացող գրառման, ներանձնականության արդյունքում ծնված այս ներքին տեքստի մեջ կա բնագրային խորք: Թվում է՝ բանաստեղծը համակված է շոպենհաուերյան հոռետեսությամբ, բայց տողերի ենթատեքստը հուշում է հեղինակի արժանապատիվ կեցվածքի ու շիտակության մասին: Այստեղ չկա մոլորություն, չկա կեղծիք և սուտ, կա ինքնախոստովանանք՝ զգայուն ու բանական՝ առանց թատերականացումների:

1975-ին «Երգեր առանց երաժշտության» բանաստեղծական գրքույկի առանցքում անհատն է՝ զերծ պայմանականություններից ու սենտիմենտալությունից: Բոլոր ստեղծագործությունների հիմքում բանաստեղծի «ես»-ն է, որի միջով բեկվում են իրողություններն ու երևույթները, իրականն ու ցանկալին:

Բանաստեղծն ապրում է իրականության մեջ, գնահատում գոյությունը և սարսափում, որ նրա շինծու դառնալուց անարձագանք կմնա:

Մի թողեք, որ մեռնեմ անարցունք:
Դաշտերի վրա հիմա ձյուն ու խաղաղություն,
շրջում են որսորդները և որոնում վերջին աղավնուն,-
չափից դուրս շատ է մշակված ձեր ձայնը, օրիորդ,
այն չի հուզի քարացած սրտերը որսորդների:

Բանաստեղծի սերն առօրյա իրականությունն է, իսկ այն կոխկրտողները բազմապատկում են նրա տառապանքը, որից ծնված ցավը վեհացնում է հոգին՝ տալով արարելու նոր մղումներ ու լիցքեր: Այնուհանդերձ, բանաստեղծի հիասթափությունների մեջ կարելի է բացահայտել կյանքն իմաստավորելու, նրան յուրատիպ երանգներ հաղորդելու էկզիստենցիալ մղումը.

Շարունակեք
բարձր, բարձր ծիծաղել
Այսօր ուզում եմ ես տխուր լինել
Ջարդեք սեղանները, աթոռները բոլոր,-
Այսօր ուզում եմ ես տխուր լինել:

---

[15] **Անդ**, էջ 9:

Հետ պատմեք
միայն թե ուրախ,
ինչպես են տերևները թափվում,
ձեռքերով ցույց տվեք,
միայն թե աշխույժ,
ինչպես են օրորվում օդի մեջ:
Իսկ հետո լռեք:
Եվ ծառը կմնա մենակ:[16]

«Գրիգորյանի յուրաքանչյուր բանաստեղծություն սեփական փորձի և տեսության խառնուրդ է, կառուցվածքի «դիդակտիկ» կազմախոսություն: Նա, ընտրելով պատումային եղանակը, ստեղծում է փոքրիկ «դրամաներ»՝ տիպաբանական կապ պահպանելով հայ հնագույն պոեզիայի հետ (անմիջական չէ այդ կապը)», գրում է Ն. Ղազարյանը[17]: Ի տարբերություն հետմոդեռնիզմի գրական կերպարի, Գրիգորյանի քնարական «ես»ը, որը նաև էպիկական բնութագրություն ունի, ամբողջական մարդն է, «միջին վիճակագրական» (ընդգրկումի լայնությամբ) մի տիպ, մտավորական: Նա ներկայանում է սեփական գոյության ու կեցության ինքնակենսագրական նյութով (դա բոլորի «ինքնակենսագրականն» է):

Դառնալ բոլորի «ինքնակենսագրականը» բանաստեղծին հաճախ հաջողվում է ոչ միայն ասելիքի կառուցակարգի ազատ ոճի, այլև հեգնանքի տարրի միջոցով, որն ընթերցողի մոտ հուզական հակազդումը դարձնում է յուրահատուկ: Սովորաբար այն պոեզիայում հայտնվում է կյանքի սրություն ունեցող խնդիրների շրջանում, որով օրվա խնդիրն ու թեման դառնում են արդիական: Նաև այդպես է բանաստեղծը արձագանքում հասարակական ու պետական նշանակության խնդիրներին: Մինչանկախության և հետանկախության շրջանի ստեղծագործությունների վերլուծությունները թույլ են տալիս ենթադրել, որ հեգնանքի տարրը առավելապես բնորոշ է հետխորհրդային շրջանի ստեղծագործություններին:

Առաջին հայացքից թվում է որոշակի ներամփոփություն կա աշնան ու սիրո, ինչու չէ նաև սոցիալական շեշտադրումների թեմաներում, բայց ասելիքի համապարփակությունը, ստեղծագործական նոր սկզբունքներից արտածում է ասելիքի համոզմունքի ուժը:

Բոլոր թեմաների մեջ էլ բանաստեղծը Արթուր Ռեմբոյի «տեսնող» մարդն է և ոչ միայն ինքն իրեն: «Բանաստեղծն իրեն տեսնող է դարձնում

---

[16] **Անդ**, էջ 17:

[17]**Ղազարյան Ն.**, Բանաստեղծության դրաման, «Գրական թերթ», թիվ 14,15 դեկտեմբերի, 2013 թ.:

բոլոր զգայությունների երկարատև, անսահմանափակ ու գիտակցված խանգարման միջոցով: Սիրո, տառապանքի, խելագարության բոլոր ձևերը նա որոնում է ինքն իրեն, սպառում է իր մեջ բոլոր թույները, որպեսզի պահպանի դրանց բուն էությունը: Անպատմելի մի տանջանք, որտեղ նա ողջ հավատի, գերմարդկային ողջ ուժի կարիքն ունի և որտեղ նա բոլոր հիվանդներից ամենահիվանդն է, բոլոր քրեականներից ամենաքրեականը, բոլոր անիծվածներից՝ ամենաանիծվածը, և բոլոր գիտնականներից՝ Գերագույնը: Քանզի նա անհայտին է հասնում»[18]:

«Դանդաղ ժամեր» (1986) ժողովածուում սովորական օրն է՝ իր առօրյա մանրուքներով, աննկարագրելի ռիթմերով, որտեղ, սակայն, բանաստեղծի հոգեսույզ ներթափանցումները պեղում ու բացահայտում են մոռացվածն ու անտեսանելին՝ հաստատելով կենսաշարժ օրվա ռիթմերը ներդաշն դարձնելու խորհուրդը:

Ժողովածուի շարքերը օրվա ընթացքի անուններն են կրում՝ խորհրդանշելով կյանքի ընթացքը: Եթե օրվա մանկություն, ուրեմն՝ «Առավոտյան ժամեր», եթե առտնին մանրուքներով բեռնավորված ժամեր, ուրեմն՝ «Ցերեկային», իսկ երբ խտանում են խավարի աչիկները, ուրեմն՝ «Իրիկնային ժամեր», ու եթե փոքրիկ աստղիկների երգ, ուրեմն՝ «Գիշերային ժամեր» և այլն: Ժամանակի կատեգորիայի ու մարդու գոյի գրիգորյանական ըմբռնում ու ներկայացում. թերևս այսպես կարելի է բնորոշել «Դանդաղ ժամեր» ժողովածուի ստեղծագործությունների մեծ մասը: «Նա կանգնում է աշխարհի աննկատ մի անկյունում ու փորձում ժամանակի սրտազարկերը «որսալ» երկրագնդի ամբողջականությունը պահող նյարդային համակարգով»[19]: Ժամանակի զարկերակը խորապես զգացող բանաստեղծը պրոյեկտում է իր ապրումները «Սովորական օրվա սկզբում», «Առավոտյան», «Նոր արթնացման», «Եվս մի առավոտյան», «Գարնանը», «Անցած ժամանակներում», «Տարիների հետ», «Իրիկնային ժամերին», «Գիշերային ժամերին», «Կիրակի» ու «Ծննդյան օրը», «Այն տարիներին» և այլն:

Ժամանակը. Այս ուշագրավ տարածքը դառնում է Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի ասելիքի ենթատեքստը՝ ընդգծելով նրա համամարդկային, ազգային ու անհատական մտածողության սահմանները, ըստ որում հիմնական կշռույթը մարդկայինի մեջ է. ո՞վ է մարդը, ի՞նչ առաքելություններ ունի նա: Թերևս այսպես նա բացահայտում է

[18] **Ա. Ռեմբո**, Բանաստեղծություններ, «Ապոլոն» հրատ., 1998, էջ 146:

[19] **Վ. Հակոբյան**, Քսաներորդ դարի հայ քնարերգության զարգացման հիմնական միտումները: Գրականագիտական, Ստեփանակերտ, «Արցախ», 1998, էջ 266:

իրականության քաղաքական, հասարակական, մշակութային համայնապատկերը՝ ուրվագծելով ցանկալի տեսլական:

Բոլոր թեմաները՝ իրենց թեմատիկ ուղղվածությունից անկախ, հաստատում են, այսպես ասած, հովհաննեսգրիգորյանական իրականության ըմբռնման ու արտապատկերման ճշմարտության կոնցեպցիան: Ինքնաորոնման ու ինքնաամբողջացման տվայտանքների միջով բեկվում է առօրյա չգոյությունը, և ուղղակի հորդորի ու խրատի փոխարեն անկողմնակալությունը, ազնվությունն ու նվիրումը: Բոլոր թեմաներում էլ՝ լինի դա հայրեներգություն, սեր կամ անհատ, առկա է բանաստեղծի ոճի ու ինքնության ատաղձը, որով առանձնանում է հեղինակն ու ասելիքը:

Ամբողջացնել տրոհված իրականությունը, մասնավորապես նրա ճշմարտացիությունն ու արժեքայնությունը. նաև այսպես կարելի է բնորոշել հովհաննեսգրիգորյանական ստեղծագործական փայլատակումների արդյունքը:

Գաղափարական ու խոսքի ազատության ներկա պայմաններում Գրիգորյանի ստեղծագործություններին անդրադառնալը նոր ընկալումներ, հայեցակարգեր է հրամցնում, ինչի արդյունքում ընթերցողը հաղորդակցվում է գրական շատ էջերի նորովի մատուցմանը:

Ամփոփենք. Հովհաննես Գրիգորյանի պոեզիան արժե բաժանել մինչանկախության և հետանկախության շրջանների, չնայած գրաքննադատության մեջ հանդիպում ենք նաև նախաերկրաշարժյան և հետերկրաշարժյան եզրերին: Հովհաննես Գրիգորյանի մինչանկախության շրջանի պոեզիային բնորոշ են ինտելեկտուալ և հուզական ապրումները, պոեզիայի էպիկականացումը՝ վերլիբրի կիրառմամբ: Ըստ որում, վերջինս որպես բանաստեղծական ձև տարերային և ինքնաբուխ է, ոչ թե նախագծված ու արհեստական: Իրականում գոյություն ունի պոեզիայի և ոչ թե նրա ձևի փոխանցման երևույթ, և յուրաքանչյուր ժամանակ ծնում է իր գրողին՝ տալով նրան իրականությունը գեղագիտորեն արտացոլելու մենաշնորհը: Իսկ թեմատիկ ընդգրկումների տարածքը ևս գծում է ժամանակն ու ժամանակի գրական կերպարը, ով չի օտարվում իրականությունից, բայց նրանից բարձր կանգնելու փորձեր է անում: Այսպես է փաստարկվում պոեզիայի արժեքայնության տրամաբանությունը: «Հերոս» ու «հակահերոս» ներհակ բևեռներից արտածվում է արժեքը, որը ստատիկ է, պարզապես ենթադրում է վերաբերմունքի փոփոխություն: Այսպես ասած, փոխանցվող թեմաներից զատ, յուրաքանչյուր բանաստեղծ բերում է նաև իր թեման, կենսական հարցադրումների իր կոնցեպցիան, պարզապես փոխվում է ասելիքի ձևը՝ իրականության ու ժամանակի

կիզակետում, բանաստեղծական մտքի ու հոգու եռանդի անդուլ ընթացքի մեջ:

Սիրերգություն, հայրեներգություն, բնություն, հայրերգություն, ժամանակի խորհուրդ, գրական կամ սոցիալական հարցադրում. այս և մնացած բոլոր թեմաների ենթատեքստում բանաստեղծի գրական կերպարն է, որի միջով բեկվում է իրականությունը: Եվ այդ կերպարը կարող է ծնվել բնության երևույթների անձնավորման կամ շնչավորման, իմաստային զուգորդումների կամ սիմվոլների կիրառման ու պարզապես գեղարվեստական հնարաստեղծման արդյունքում: Բոլոր այդ թեմաների ենթատեքստը աշխարհի և մարդու ներդաշնակեցման իրողությանը հասնելն է, ինչը ընթերցողի մոտ ևս ծնում է աշխարհի հետ ներդաշնակվելու ներքին մղումը, դրդապատճառը:

Եթե Ա. Նիկողոսյանի մոտ հիմնական շեշտադրումը հետերկրաշարժյան շրջանի «ողբերգականի էութենությունն» է, ապա Ս. Աբրահամյանի մոտ գրիգորյանական պոեզիայի թեմատիկային առնչվող վերլուծություններն առավելապես ընդհանրական են:

Գրիգորյանի առաջադրած գրական-գեղարվեստական խնդիրները վերափոխվում են ժամանակի խնդիրներին համապատասխան: Ավելին, ժամանակագրությունն ու թեմատիկան հստակեցնում են տեքստ և ընթերցող հաղորդակցման սահմանները, ըստ որում ժամանակի խնդրո առարկան կարող է դառնալ թեմատիկայի արժանիքը: Ժամանակն է դառնում թեմատիկայի գեղարվեստական ակտիվությունը: Ժամանակը նրա պոեզիայի անտեսանելի զրուցակիցն է՝ իրական ու անդին, որն օրգանապես կապված է տեքստին ու ենթատեքստին: Թերևս սա է գրիգորյանական պոեզիայի մինչանկախության շրջանի թեմատիկ պարագրումների ընդգրկման երևույթը, որը հարուստ է ու նպատակային, դիպուկ և ներգործուն, ինչը բանաստեղծական մտածողության յուրահատկության ծնունդ է:

Ռ. Սայիյան

Հովհաննես Գրիգորյանի մինչանկախության շրջանի պոեզիայի թեմատիկ ընդգրկումները

Ամփոփում

Հովհ. Գրիգորյանի պոեզիան բաժանում ենք մինչանկախության և հետանկախության շրջանների, չնայած գրաքննադատության մեջ հանդիպում ենք նախաերկրաշարժյան և հետերկրաշարժյան եզրերին: Հովհաննես Գրիգորյանի մինչանկախության շրջանի պոեզիային բնորոշ են ինտելեկտուալ և հուզական ապրումները՝ վերլիբրի կիրառմամբ:

Սիրերգություն, հայրեներգություն, բնություն, հայրերգություն, ժամանակի խորհուրդ, գրական կամ սոցիալական հարցադրում. այս և

մնացած բոլոր թեմաների ենթատեքստում գրական կերպարն է, որի միջով բեկվում է իրականությունը, իսկ գեղարվեստական ստեղծագործության իրական փաստը ժամանակն է՝ իրենից ածանցվող խնդիրներով:

Р.Саиян

Тематика поэзии Ованнеса Григорянав период до обретения независимости

Резюме

Поэзию О.Григоряна, можно разделить на поэзию до и после обретения независимости, хотя мы также встречали деление на поэзию до и после землетрясения. Поэзию О.Григоряна в период до обретения независимости характеризует интеллектуального и эмоционального переживаний в форме верлибра.

Любовная лирика, патриотизм, природа, посвящение родителям, уроки времени, вопросы литературы и социологии –все эти и другие темы подняты в образе литературного героя, который преломляет призму реальности, в то время как истинным актором художественного произведения выступает время с производными от него проблемами.

R. Sayiyan

The Poetic Themes of Hovhannes Grigoryan in the Pre-Independence Period

Summary

The poetry by H.Grigoryan can be divided into pre-and post-independence poetry, however there is also a division into pre- and post- earthquake poetry. The poetry by H.Grigoryan in the pre-independence period is characterized by the intellectual and emotional experiences, and free verse.

Love poetry, patriotism, nature, *parents devotion poems,* time lessons, problems of literature and sociology - all these and other issues are embodied in the image of the literary hero who breaks the prism of reality, while the Time with its issues appears to be the true actor of fiction.